ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի միացյալ նահանգներ (Բոստոն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.** Անահիտ Հովհաննիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.** Հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.** ԱՄՆ Բոստոն քաղաք, 10.06.23-18.06.23

4. **Հրավիրող կողմը.** ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակ

5. **Գործուղման նպատակը.** Բոստոն (Ամերիկայի Միացյալ Նահանգներ) Հարվրդի Համալսարանի Հանրային առաողջապահության դպրոցի կամպուսում կազմակերպվող «Բարրի Լանդրիի անվան՝ Երեխաների պաշտպանության մասնագիտական վերապատրաստման ծրագիր» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով

6. **Քննարկված թեմաները.** Դասընթացի շրջանակներում ներկայացվել են հետևյալ թեմաները՝ Վաղ մանկության շրջանում երեխաների զարգացման և առողջության վրա ազդող գործոնները, Տեղահանված երեխաները և նրանց կրթությունը, Կլիմայական փոփոխությունները և երեխաների բարեկեցությունը, Ներդրումներ երեխաների պաշտպանության ծրագրերում, Բանակցություններ աշխարհայացքների միջև, Սոցիալական և համակարգային անհավասարություններ և երեխաների առողջությունը, Միգրացիա և երեխաների պաշտպանություն, Թվային աշխարհ և երեխաների պաշտպանություն, Անչափահասների արդարադատություն, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կիրարկում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Դասընթացի ընթացքում քննարկվել են երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող հիմնահարցեր, Հարվրդի համալսարանի դասախոսների կողմից ներկայացվել է միջազգային փորձը, ոլորտում առկա

խնդիրները, դրանց լուծման հնարավոր ուղիները, գիտական վերլուծություններ: Քննարկումներ են ծավալվել 9 երկրների ներկայացուցիչների միջև՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի զարգացման և առաջընթացի նպատակով, այդ թվում կազմակերպվել են խմբային աշխատանքներ: Դասընթացի ավարտին՝ ստացված գիտելիքների արդյունքում մշակվել է կարիքահեն սահիկաշարեր, որոնք մասնակից երկրները կարող են կիրառել ի նպաստ ոլորտային աշխատանքների արդյունավետության բարձրացման:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի արդյունքում ձեռքբերված գիտելիքները կկիրառվեն Երեխաների իրավունքների պաշտպանության նոր համալիր ծրագրի մշակման, ինչպես նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայից բխող պարտավորությունների իրականացման ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

21.06.23թ